ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 345 -Ա/2 «10» մարտի 2021 թ.

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կրթության և գիտության նախարարի՝ 2013 թվականի ապրիլի 15-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի օգոստոսի 2-ի N 1262-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 396-Ն հրամանը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել Հանրակրթական պետական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղը համալրելու մրցույթի անցկացման թեստավորման փուլի հարցաշարը՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Կրթություն» շաբաթաթերթի խմբագիր Գ.Մինասյանին՝ հաստատված հարցաշարը տպագրել պաշտոնաթերթի առաջիկա համարում:

3. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի մամուլի քարտուղար Գ.Մելիքբեկյանին՝ հաստատված հարցաշարը տեղադրել նախարարության պաշտոնական կայքէջում:
4. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ժ. Անդրեասյանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Recoverable Signature

X 

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2021 թվականի մարտի 10-ի N 345-Ա/2 հրամանի

Հանրակրթական պետական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղը համալրելու մրցույթի անցկացման թեստավորման փուլի

ՀԱՐՑԱՇԱՐ

1. Համատեղ դասավանդումը՝

- մանկավարժների կամ այլ մասնագետների գործընկերությունն է՝ դասարանի ներսում տարբեր կարիքներ ունեցող աշակերտներին դասավանդելու համար:

(Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք, երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020)

2. Նշեք համատեղ դասավանդման եղանակը՝

- թիմային դասավանդում

(Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք, երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020)

3. Նշեք համատեղ դասավանդման եղանակը՝

- մեկը սովորեցնում է, մյուսը՝ դիտարկում

(Մանուկ Խաչատրյան, Միեր Դավթյան, Դասավանդման ժամանակակից մոտեցումներ ու մեթոդներ, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Զանգակ հրատարակչություն, 2019)

4. Նշեք համատեղ դասավանդման եղանակը՝

- Դասավանդում կայաններում

(Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք, երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020)

5. Նշեք համատեղ դասավանդման եղանակը՝

- զուգահեռ դասավանդում

(Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք, երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020)

6. Նշեք համատեղ դասավանդման եղանակը՝

- այլընտրանքային դասավանդում

(Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք, երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020)

7. Ուսուցչի օգնականը՝

- աշխատում է ուսուցչի վերահսկողությամբ՝ աշակերտներին ուշադրության կենտրոնում պահելու և ուսուցմանն օժանդակելու համար:

(Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք, երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020)

8. Ուսումնառության համընդհանուր ձևավորումը՝

- ուղղված է սովորողների՝ որպես սովորական և առանձնահատուկ երեխաների տարբերակումը վերացնելուն՝ ելնելով այն հանգամանքից, որ յուրաքանչյուր անհատ տարբեր կերպ է սովորում, և բազմազան մոտեցումների կիրառումը կօգնի բոլոր սովորողներին:

(Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք, երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020)

9. Հեռավար կրթությունը՝

- կրթական ծրագրի իրականացման ձև է, որի շրջանակներում անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի և ուսուցչի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով և հիմնական հանրակրթական ծրագրերի կազմակերպման ընթացքում կարող է կիրառվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով և դեպքերում՝ որոշակի ժամկետով:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 20.05.20 թվականի թիվ 09-Ն հրաման «Հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման կարգ»-ը հաստատելու մասին

10. Հեռավար կրթությամբ իրականացվող կրթական ծրագրերի բովանդակությունը՝

- չի կարող տարբերվել տվյալ առարկայի ծրագրով և չափորոշչով սահմանվածից:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 20.05.20 թվականի թիվ 09-Ն հրաման «Հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման կարգ»-ը հաստատելու մասին

11. Կրթության շարունակականությունը ապահովելու համար հանրակրթական հիմնական կրթական ծրագրերով հեռավար ուսուցումը կարող է կազմակերպվել՝

- եթե հաստատությունը չունի համապատասխան առարկայի մասնագետ, մինչև սահմանված կարգով մրցութային հիմունքներով ուսուցչի թափուր տեղի համալրումը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 20.05.20 թվականի թիվ 09-Ն հրաման «Հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման կարգ»-ը հաստատելու մասին

12. Կրթության շարունակականությունը ապահովելու համար հանրակրթական հիմնական կրթական ծրագրերով հեռավար ուսուցումը կարող է կազմակերպվել՝

- արտակարգ և ֆորս մաժորային իրավիճակներում (եղանակային անբարենպաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետ և այլն):

ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 20.05.20 թվականի թիվ 09-Ն հրաման «Հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման կարգ»-ը հաստատելու մասին

13. Կրթության շարունակականությունը ապահովելու համար հանրակրթական հիմնական կրթական ծրագրերով հեռավար ուսուցումը կարող է կազմակերպվել՝

- դիվանագիտական աշխատանքի անցած ծնողների (օրինական ներկայացուցիչների) երեխաների համար՝ առավելագույնը 1 կիսամյակ, կամ օտարերկրյա պետություններում ծնողների (օրինական ներկայացուցիչների) հետ ժամանակավոր գտնվող երեխաների համար՝ առավելագույնը 20 օր, եթե կրթության իրավունքը չի իրացվել տվյալ երկրում:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 20.05.20 թվականի թիվ 09-Ն հրաման «Հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման կարգ»-ը հաստատելու մասին

14. Կրթության շարունակականությունը ապահովելու համար հանրակրթական հիմնական կրթական ծրագրերով հեռավար ուսուցումը կարող է կազմակերպվել՝

- այն երեխաների համար, որոնք ունեն առկա ուսուցումն անհնարին դարձնող երկարատև բուժման կարիք:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 20.05.20 թվականի թիվ 09-Ն հրաման «Հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման կարգ»-ը հաստատելու մասին

15. Կրթության շարունակականությունը ապահովելու համար հանրակրթական հիմնական կրթական ծրագրերով հեռավար ուսուցումը կարող է կազմակերպվել՝

- այն երեխաների համար, որոնք առարկայական կամ սպորտային միջազգային օլիմպիադաների կամ մրցաշարերի մասնակիցներ են և հաճախ են բացակայում երկրից:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 20.05.20 թվականի թիվ 09-Ն հրաման «Հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման կարգ»-ը հաստատելու մասին

16. Հեռավար կրթության տեխնոլոգիաները՝

- չեն կարող կիրառվել սովորողների կողմից կրթական ծրագրի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման, սովորողի փոխադրման ժամանակ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 20.05.20 թվականի թիվ 09-Ն հրաման «Հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման կարգ»-ը հաստատելու մասին

17. Կարողունակությունների ձևավորմանն ուղղված կրթությունը՝

- ուղղված է սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերի ուսուցմանը: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման

գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից:

ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»

18. Նշեք ավանդական և կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասի տարբերությունը՝

- ավանդական դասի ընթացքում սովորողները պասիվ են, հիմնականում լսում են, կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասի ընթացքում հնարավորություն ունեն հարցեր տալու, կարծիք հայտնելու:

Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020
Մասնակցային դպրոց | Անուշ Սարուխանյան, Կարինե Մարգարյան, Արտաշես Թորոսյան #EdcampArmenia2020.
https://www.youtube.com/watch?v=JkMZZIh8A-I

19. Նշեք ավանդական և կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասի տարբերությունը՝

- Ավանդական դասի ընթացքում գործում է ուսուցիչ-աշակերտ կապը, կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասին՝ նաև աշակերտ-աշակերտ կապը:

Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020
Մասնակցային դպրոց | Անուշ Սարուխանյան, Կարինե Մարգարյան, Արտաշես Թորոսյան #EdcampArmenia2020.
https://www.youtube.com/watch?v=JkMZZIh8A-I

20. Նշեք ավանդական և կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասի տարբերությունը՝

- Ավանդական դասին ուսուցիչը, ըստ թեմատիկ պլանի, ծրագիրն անցնում է, կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասի ընթացքում մյուս թեմային չի անցնում, քանի դեռ աշակերտները չեն յուրացրել տվյալ թեմայի առանցքային գաղափարները:

Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020
Մասնակցային դպրոց | Անուշ Սարուխանյան, Կարինե Մարգարյան, Արտաշես Թորոսյան #EdcampArmenia2020.
https://www.youtube.com/watch?v=JkMZZIh8A-I

21. Նշեք ավանդական և կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասի տարբերությունը՝

- Ավանդական դասի ուսումնական նյութը ծավալուն է, հաճախ կարևորն ու անկարևորը տարբերակված չեն, կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասի ընթացքում ուսումնական նյութը կառուցված է առանցքային կարողունակության և գաղափարների շուրջ:

Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020
Մասնակցային դպրոց | Անուշ Սարուխանյան, Կարինե Մարգարյան, Արտաշես Թորոսյան #EdcampArmenia2020.
https://www.youtube.com/watch?v=JkMZZIh8A-I

22. Նշեք ավանդական և կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասի տարբերությունը՝

- Ավանդական դասին ուսումնառության նպատակները ոչ միշտ են չափելի և թափանցիկ, կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասին ուսումնառության նպատակները չափելի են և թափանցիկ սովորողների համար:

Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020
Մասնակցային դպրոց | Անուշ Սարուխանյան, Կարինե Մարգարյան, Արտաշես Թորոսյան #EdcampArmenia2020.
https://www.youtube.com/watch?v=JkMZZIh8A-I

23. Նշեք ավանդական և կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասի տարբերությունը՝

- Ավանդական դասին շեշտը դրվում է գիտելիքների, հմտությունների ուսուցման վրա, կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասին, դրանից բացի, կարևորվում է նաև արժեքների և վերաբերմունքի ուսուցումը:

Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020
Մասնակցային դպրոց | Անուշ Սարուխանյան, Կարինե Մարգարյան, Արփաշես Թորոսյան #EdcampArmenia2020.
https://www.youtube.com/watch?v=JkMZZIh8A-I

24. Նշեք ավանդական և կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասի տարբերությունը՝

- Ավանդական դասին կարևորվում է ուսումնական առարկաների անջատ ուսուցումը, կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասին առարկաների ուսուցման միջոցով զարգացվում են վերառարկայական հմտություններ՝ խնդիրների լուծում, քննադատական մտածողություն, համագործակցություն:

Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020
Մասնակցային դպրոց | Անուշ Սարուխանյան, Կարինե Մարգարյան, Արփաշես Թորոսյան #EdcampArmenia2020.
https://www.youtube.com/watch?v=JkMZZIh8A-I

25. Նշեք ավանդական և կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասի տարբերությունը՝

- Ավանդական դասին կարևորվում է ուսումնական նյութի մեխանիկական վերարտադրությունը՝ առանց գործնական հմտությունների հետ կապակցելու, կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասին կարևորվում է բովանդակության խոր ըմբռնումն ու կապակցումը հմտությունների հետ:

Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020
Մասնակցային դպրոց | Անուշ Սարուխանյան, Կարինե Մարգարյան, Արփաշես Թորոսյան #EdcampArmenia2020.
https://www.youtube.com/watch?v=JkMZZIh8A-I

26. Նշեք ավանդական և կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասի տարբերությունը՝

- Ավանդական դասին սովորողները անհատական մոտեցման են արժանանում միայն այն դեպքում, երբ նրանց առաջադիմությունը շատ բարձր է կամ շատ ցածր, կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասին սովորողները ստանում են իրենց կրթական կարիքներին համապատասխանող աջակցություն:

Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020
Մասնակցային դպրոց | Անուշ Սարուխանյան, Կարինե Մարգարյան, Արփաշես Թորոսյան #EdcampArmenia2020.
https://www.youtube.com/watch?v=JkMZZIh8A-I

26. Նշեք ավանդական և կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասի տարբերությունը՝

- Ավանդական դասին շեշտը դրվում է միավորային գնահատման վրա, կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասին օգտագործվում են գնահատման տարբեր մոտեցումներ, շեշտը դրվում է ձևավորող գնահատման վրա:

Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020
Մասնակցային դպրոց | Անուշ Սարուխանյան, Կարինե Մարգարյան, Արփաշես Թորոսյան #EdcampArmenia2020.
https://www.youtube.com/watch?v=JkMZZIh8A-I

27. Միջնակարգ կրթության կարողունակությունն է՝

- լեզվական գրագիտություն և կարողունակություն. սովորողները տիրապետում են հայոց լեզվին, գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցվում են մայրենի լեզվով և այլ օտար լեզուներով՝ ըստ լեզվական կանոնների և իրավիճակների: Նրանք կիրառում են

լեզուն՝ որպես ուսումնառության և հասարակական կյանքին մասնակցության համապիտանի գործիք: Ընդհանուր գրագիտությունը կազմում է սովորելու և լեզվական հաղորդակցության հիմքը, որի հիման վրա կարող են ձևավորվել գրագիտության մյուս ձևերը (քաղաքացիական, բնապահպանական, տնտեսական, ֆինանսական, իրավական, առողջապահական, գիտատեխնիկական, թվային և այլն): Սովորողներն ընդունակ են բանավոր և գրավոր ձևերով ճանաչելու, ըմբռնելու, արտահայտելու, ստեղծելու և մեկնաբանելու տարբեր հայեցակարգեր, փաստեր և կարծիքներ՝ օգտագործելով տարբեր առարկաներին և իրավիճակներին առնչվող տեսողական, ձայնային և թվային նյութեր:

ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»

28. Միջնակարգ կրթության կարողունակությունն է՝

- սովորել սովորելու կարողունակություն. սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները: Սովորողները ինքնակազմակերպվում են և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն: Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները, սովորում են աշխատել ծանրաբեռնվածության պայմաններում: Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Սովորողները ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն:

ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, Հայաստանի

Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»

29. Միջնակարգ կրթության կարողունակությունն է՝

- ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն. սովորողներն ընդունակ են ինքնանդրադարձման և ինքնակազմակերպման միջոցով ձգտելու ինքնաճանաչման: Նրանք ձևավորում են վստահություն սեփական ուժերի և կյանքի հանդեպ և հաջողությամբ կառավարում են սեփական ժամանակը, գիտելիքներն ու հմտությունները, կարողանում են դրսևորել առողջ և անվտանգ կենսակերպ, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշում: Սովորողները դրսևորում են հարգանք, ազնվություն և պատասխանատվություն ինչպես սեփական անձի, այնպես էլ այլոց հանդեպ՝ անկախ տարիքից, սեռից, ազգությունից, բարեկեցության աստիճանից, արտաքին տեսքից, ընդունակություններից, մասնագիտությունից, համոզմունքներից և այլ առանձնահատկություններից: Նրանք սոցիալական հարաբերություններում գործում են կառուցողական և համերաշխ, դրսևորում են ընկերակցելու ունակություն և կոնֆլիկտների խաղաղ և համագործակցային կարգավորման հմտություններ: Տարբեր մշակույթների, կրոնների, աշխարհայացքների և կյանքի կազմակերպման անհատական պատկերացումների հետ առնչվելու արդյունքում սովորողներն ընդունակ են ճանաչելու դրանց տարբերությունները:

ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»

30. Միջնակարգ կրթության կարողունակությունն է՝

- ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն. սովորողները նպաստում են ժողովրդավարության, ազատության, բարեվարքության, սոցիալական արդարության և իրավական պետության գաղափարի վրա հենվող հասարակության զարգացմանը:

Նրանք ճանաչողության միջոցով ձևավորում են սեր հայրենիքի նկատմամբ, գիտակցում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից բխող ազգային, պետական, հասարակական շահերն ու առաջնահերթությունները տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում: Սովորողներն արժևորում են մարդու կյանքն ու արժանապատվությունը, կարևորում են սեփական քաղաքացիական պարտքը, քաղաքացիական մասնակցության մշակույթը՝ որպես ժողովրդավարության կենսունակության հիմք: Նրանք ճանաչում են հասարակության կյանքի մշակութային, պետաիրավական և տնտեսական ոլորտներն ու համակողմանի վերլուծում դրանք, ցուցաբերում են նախաձեռնողականություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու, դրանք իրագործելու ունակություն և հետևանքների համար պատասխանատու լինելու պատրաստակամություն:

ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»

31. Միջնակարգ կրթության կարողունակությունն է՝

- թվային և մեդիա կարողունակություն. սովորողները տիրապետում են մեդիագրագիտության կանոններին ու հմտություններին. պատկերացնում են մեդիայի աշխատանքը և դերը ժողովրդավարական հասարակությունում, կարողանում են կողմնորոշվել տեղեկատվության հոսքերում, գտնել և տարածել տեղեկություններ, քննադատորեն վերլուծել դրանք, գնահատում են մեդիայի ազդեցությունը սեփական և այլոց արժեքային պատկերացումների, դիրքորոշումների և գործողությունների վրա: Թվային մեդիայի օգտագործման հնարավորությունների կողքին գիտակցում են նաև դրանց հետ կապված ռիսկերը, ունակ են գնահատելու և վերափոխելու իրենց վարքը թվային աշխարհում՝ անվտանգության, պատասխանատվության և էթիկայի տեսանկյունից: Տիրապետում են մեդիա արտադրանք ստեղծելու տեխնիկական և ստեղծագործական հմտություններին, ինչպես նաև կարողանում են արդյունավետորեն

կիրառել մեդիա գործիքները քաղաքացիական իրավունքների իրացման ու ժողովրդավարական գործընթացների մասնակցության նպատակով:

ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»

32. Միջնակարգ կրթության կարողունակությունն է՝

- մշակութային կարողունակություն. սովորողները ճանաչում են հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ: Նրանք արժևորում են սեփական ինքնությունը, ընտանիքի, համայնքի և պետության դերը, ունեն Հայաստանի աշխարհագրության, հասարակական-քաղաքական համակարգի և պատմության հիմնարար իմացություն: Աշակերտները ձևավորում են սեփական նախասիրություններ ազգային և համաշխարհային մշակութային ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթացքում: Նրանք ի վիճակի են զարգացնելու սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացումները՝ արժևորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը և ձևավորելով մշակութային գրագիտություն և ճաշակ:

ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»

33. Միջնակարգ կրթության կարողունակությունն է՝

- մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն. սովորողներն առօրյա կյանքում օգտագործում են մաթեմատիկական մտածողություն՝ բնության,

հասարակության, մշակույթի և աշխատանքային ոլորտի երևույթները ճանաչելու և դրանք մաթեմատիկական կառուցվածքների, բանաձևերի, մոդելների, կորերի, աղյուսակների միջոցով հասկանալու համար: Աշակերտները կարողանում են ընկալել և արդյունավետ կիրառել վերացարկված և ընդհանրացված հասկացությունները և ճանաչել իրականության մեջ դրանց արտացոլումները: Նրանք ընկալում են բնագիտական մտածողության և աշխատանքի, ինչպես նաև տեխնիկական առաջընթացի միջև եղած փոխադարձ կապը: Աշակերտներն ընկալում են տեխնոլոգիական գիտելիքի կիրառման հնարավորությունները մարդու պահանջմունքների համատեքստում, ճանաչում են մարդու գործունեության արդյունքում ի հայտ եկող փոփոխություններն ու սեփական պատասխանատվությունը:

ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»

34. Միջնակարգ կրթության կարողունակությունն է՝

- տնտեսական կարողունակություն. աշակերտները համարժեք վերլուծում և գնահատում են մասնավոր ձեռնարկատիրության, ժողովրդական տնտեսության և համաշխարհային տնտեսական մակարդակներում տեղի ունեցող տնտեսական գործընթացները և պետության դերը տնտեսության մեջ, ինչպես նաև այդ գործընթացներում ճանաչում, գնահատում և արժևորում են կնոջ և տղամարդու ունեցած դերը: Նրանք հասկանում են հասարակության, տնտեսության և քաղաքականության միջև եղած փոխազդեցությունները: Աշակերտներն ընկալում են տնտեսական և հասարակական կարգերն ու ճանաչում են բնության և հասարակության փոխազդեցությունները, ինչպես նաև կայուն զարգացման ու շրջակա միջավայրի պահպանության գործում սեփական դերն ու պատասխանատվությունը:

ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»

35. Սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները՝

- նկարագրում են, թե հանրակրթական հիմնական ծրագրերի կրթական աստիճանների ավարտին սովորողը ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա: Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»

36. Սովորողներին ներկայացվող պահանջների առաջին մակարդակն է՝

- վերարտադրումը:

Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020
Մասնակցային դպրոց | Անուշ Սարուխանյան, Կարինե Մարգարյան, Արտաշես Թորոսյան #EdcampArmenia2020.
https://www.youtube.com/watch?v=JkMZZIh8A-I

37. Սովորողներին ներկայացվող պահանջների երկրորդ մակարդակն է՝

- վերակազմավորումն ու փոխանցումը:

Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020
Մասնակցային դպրոց | Անուշ Սարուխանյան, Կարինե Մարգարյան, Արտաշես Թորոսյան #EdcampArmenia2020.
https://www.youtube.com/watch?v=JkMZZIh8A-I

38. Սովորողներին ներկայացվող պահանջների երրորդ մակարդակն է՝

- անդրադարձումն ու խնդրի լուծումը:

Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020
Մասնակցային դպրոց | Անուշ Սարուխանյան, Կարինե Մարգարյան, Արփաշես Թորոսյան #EdcampArmenia2020.
https://www.youtube.com/watch?v=JkMZZIh8A-I

39. Վերարտադրման պահանջը ներառում է՝

- հիմնարար մասնագիտական գիտելիքի վերարտադրում՝ մասնագիտական լեզվի կիրառությամբ:

Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020
Մասնակցային դպրոց | Անուշ Սարուխանյան, Կարինե Մարգարյան, Արփաշես Թորոսյան #EdcampArmenia2020.
https://www.youtube.com/watch?v=JkMZZIh8A-I

40. Վերարտադրման պահանջը ներառում է՝

- տեղեկատվության քաղում տարբեր տեքստերից և նյութերից:

Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020
Մասնակցային դպրոց | Անուշ Սարուխանյան, Կարինե Մարգարյան, Արփաշես Թորոսյան #EdcampArmenia2020.
https://www.youtube.com/watch?v=JkMZZIh8A-I

41. Վերակազմավորման և փոխանցման պահանջը ներառում է՝

- կառուցվածքային և ժամանակային կապերի բացատրություն:

Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020
Մասնակցային դպրոց | Անուշ Սարուխանյան, Կարինե Մարգարյան, Արփաշես Թորոսյան #EdcampArmenia2020.
https://www.youtube.com/watch?v=JkMZZIh8A-I

42. Վերակազմավորման և փոխանցման պահանջը ներառում է՝

- տարբեր իրողությունների ողջամիտ փոխկապակցում և դասակարգում:

Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020
Մասնակցային դպրոց | Անուշ Սարուխանյան, Կարինե Մարգարյան, Արտաշես Թորոսյան #EdcampArmenia2020.
https://www.youtube.com/watch?v=JkMZZIh8A-I

43. Անդրադարձումն ու խնդրի լուծումը ներառում է՝

- տարբեր իրողությունների ինքնուրույն քննարկում:

Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020
Մասնակցային դպրոց | Անուշ Սարուխանյան, Կարինե Մարգարյան, Արտաշես Թորոսյան #EdcampArmenia2020.
https://www.youtube.com/watch?v=JkMZZIh8A-I

44. Անդրադարձումն ու խնդրի լուծումը ներառում է՝

- գիտելիքի և իմացության խնդրակենտրոն, ստեղծագործական կիրառություն:

Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020
Մասնակցային դպրոց | Անուշ Սարուխանյան, Կարինե Մարգարյան, Արտաշես Թորոսյան #EdcampArmenia2020.
https://www.youtube.com/watch?v=JkMZZIh8A-I

45. Դասավորեք կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասի պլանավորման դիդակտիկ փուլերը ճիշտ հաջորդականությամբ.

1. Աշխուժացնել
2. Մեկնարկել, ակտիվացնել, քաջալերել
3. Կողմնորոշել դեպի նպատակ, ուղղորդել
4. Մշակել
5. Ամրապնդել, ներկայացնել, ապահովել
6. Կիրառել, փոխանցել
7. Ամփոփել, ուրվագծել հեռանկար

Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020
Մասնակցային դպրոց | Անուշ Սարուխանյան, Կարինե Մարգարյան, Արտաշես Թորոսյան #EdcampArmenia2020.
https://www.youtube.com/watch?v=JkMZZIh8A-I

46. Նշեք՝ որը կարող է լինել պատմություն առարկայի համար կարողունակությունների զարգացման մոդել՝

- պատմամշակութային կոմպետենցիա՝ քննարկել հասարակության ներկայիս վերաբերմունքը պատմության հանդեպ:

Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020
Մասնակցային դպրոց | Անուշ Սարուխանյան, Կարինե Մարգարյան, Արտաշես Թորոսյան #EdcampArmenia2020.
https://www.youtube.com/watch?v=JkMZZIh8A-I

47. Նշեք՝ որը կարող է լինել պատմություն առարկայի համար կարողունակությունների զարգացման մոդել՝

- պատումային կոմպետենցիա՝ պատմության տարբեր դրվագների պատկերավոր ներկայացում:

Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020
Մասնակցային դպրոց | Անուշ Սարուխանյան, Կարինե Մարգարյան, Արտաշես Թորոսյան #EdcampArmenia2020.
https://www.youtube.com/watch?v=JkMZZIh8A-I

48.Նշեք՝ որը կարող է լինել պատմություն առարկայի համար կարողունակությունների զարգացման մոդել՝

- Մեկնաբանելու կոմպետենցիա՝ պատմական իմաստի ընկալում:

Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020
Մասնակցային դպրոց | Անուշ Սարուխանյան, Կարինե Մարգարյան, Արտաշես Թորոսյան #EdcampArmenia2020.
https://www.youtube.com/watch?v=JkMZZIh8A-I

49. Նշեք՝ որը կարող է լինել օտար լեզու առարկայի համար կարողունակությունների զարգացման մոդել՝

- մշակութային հաղորդակցական կոմպետենցիա:

Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020
Մասնակցային դպրոց | Անուշ Սարուխանյան, Կարինե Մարգարյան, Արտաշես Թորոսյան #EdcampArmenia2020.
https://www.youtube.com/watch?v=JkMZZIh8A-I

50. Նշեք՝ որը կարող է լինել օտար լեզու առարկայի համար կարողունակությունների զարգացման մոդել՝

- Գործառնական հաղորդակցական կոմպետենցիա:

Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020
Մասնակցային դպրոց | Անուշ Սարուխանյան, Կարինե Մարգարյան, Արտաշես Թորոսյան #EdcampArmenia2020.
https://www.youtube.com/watch?v=JkMZZIh8A-I

51. Նշեք՝ որը կարող է լինել բնագիտական առարկայի համար կարողունակությունների զարգացման մոդել՝

- Բնագիտական գործնական կոմպետենցիա:

Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020
Մասնակցային դպրոց | Անուշ Սարուխանյան, Կարինե Մարգարյան, Արտաշես Թորոսյան #EdcampArmenia2020.
https://www.youtube.com/watch?v=JkMZZIh8A-I

52. Դրական վարքի ձևավորմանն ուղղված միջամտությունն ու աջակցությունը՝

- հիմնված է առաջընթացի մշտադիտարկման, տվյալների բազային վերլուծության և աջակցման աստիճանի որոշման վրա և փորձում է նվազեցնել աշակերտների նկատմամբ ուսուցիչների բացասական ուշադրությունը, որը, որպես կանոն, հակառակ ազդեցություն է ունենում՝ ավելացնելով և ամրապնդելով ցանկալի վարքագիծը:

Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք,
երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020

53. Դրական վարքի ձևավորման առաջին աստիճանը՝

- կենտրոնացած է ողջ դպրոցի վրա՝ նպատակ ունենալով ներդնելու աշակերտների շրջանում հաճախ հանդիպող անցանկալի վարքագծերի կանխման դրական ռազմավարություն:

Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք,
երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020

54. Դրական վարքի ձևավորման առաջին աստիճանի քայլերից է՝

- սահմանվում են դպրոցում ընդունելի վարքագծի կանոններ, դրանք փակցվում են դասարաններում:

Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք,
երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020

55. Դրական վարքի ձևավորման առաջին աստիճանի քայլերից է՝

- վարքագծի կանոնները սահմանվում են այն տեղերի համար, որտեղ դրանք առավել հաճախ են դրսևորվում:

Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք,
երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020

56. Դրական վարքի ձևավորման առաջին աստիճանի քայլերից է՝

- աշակերտներին սովորեցնում են ակնկալվող վարքի կանոնները:

Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք,
երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020

57. Դրական վարքի ձևավորման առաջին աստիճանի քայլերից է՝

- դասղեկներն անմիջական, հատուկ խրախուսանք են կիրառում:

Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք,
երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020

58. Դրական վարքի ձևավորման առաջին աստիճանի քայլերից է՝

- դասարանի կարգուկանոնին հետևելու համար աշակերտներին ավելի հաճախ են խրախուսում, քան դրանց չհետևելու համար նախատում են:

Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք,
երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020

59. Դրական վարքի ձևավորման առաջին աստիճանի քայլերից է՝

- սահմանվում են դասարանում անցանկալի վարքի արձագանքման ընթացակարգեր:

Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք,
երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020

60. Դրական վարքի ձևավորման առաջին աստիճանի քայլերից է՝

- դասարաններում գործում են հաճախակի կրկնվող բացասական վարքի դրսևորումների հետևողական հաղթահարման միջամտություններ:

Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք,
երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020

61. Դրական վարքի ձևավորման երկրորդ աստիճանը՝

- հիմնվում է երեխայի առաջադիմության և վարքային տվյալների վրա, որպեսզի որոշի երեխայի անհատական կարիքները, մշտադիտարկի առաջընթացը, պարզի դպրոցի մթնոլորտը և ծրագրի ներդրման ճշգրտությունը:

Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք,
երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020

62. Դրական վարքի ձևավորման երկրորդ աստիճանում՝

- ներգրավվում են տասը կամ ավելի աշակերտներ: Կազմվում են աջակցության անհատական պլաններ՝ հիմնված խնդրահարույց վարքագծի դրսևորումների ու դրանց դրդապատճառների վրա:

Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք,
երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020

63. Դրական վարքի ձևավորման երրորդ աստիճանի աջակցության կարիք է ունենում՝

- աշակերտների փոքր մասը՝ 3-5%-ը:

Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք,
երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020

64. Դրական վարքի ձևավորման երրորդ աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողների վարքային խնդիրները՝

- կարող են հանգեցնել հատուկ կրթության հաստատությունում տեղակայվելու կամ դպրոցից հեռացվելու:

Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք,
երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020

65. Նշել անհատական ուսումնական պլանի կազմման ժամանակ պատասխան պահանջող հինգ հարցերը.

1. Պատմությունը
2. Երազանքներ
3. Մտավախություններ
4. Ո՞վ է
5. Կարիքներ

Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք,
երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020

66.Բազմամասնագիտական թիմը՝

- բազմաթիվ ոլորտներ ներկայացնող մասնագետներից և երեխայի ընտանիքի անդամներից բաղկացած խումբ է, որը հետապնդում է մեկ ընդհանուր նպատակ՝ ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի հաջողությունը հանրակրթական դասարանում:

Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք,
երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020

67.Բազմամասնագիտական թիմում ուսուցչի պարտականությունն է՝

- դպրոցի և ընտանիքի կապի պահպանում:

Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք,
երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020

68.Բազմամասնագիտական թիմում ուսուցչի պարտականությունն է՝

- մասնակցություն անհատական ուսումնական պլանի մշակմանը:

Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք,

երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020

69.Բազմամասնագիտական թիմում ուսուցչի պարտականությունն է՝

- առաջնային գնահատում:

Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք,

երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020

70.Հեռավար ուսուցման բաղադրիչ է՝

- ուսումնառության կառավարման համակարգը:

Հեռավար ուսուցման կազմակերպման ձեռնարկ, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն ՊՈԱԿ, 2020,

https://drive.google.com/file/d/1Fqjd4Pj2kejJ9iksB4GOB0rBfBdvU54K/view?fbclid=IwAR3E0bfzQRxto6ieZBpzfmtwPYfl2xn3MHxpIw1SRNFiaW3CXzYg2N1ed4k

71.Հեռավար ուսուցման բաղադրիչ է՝

- Առցանց-համաժամանակյա հանդիպում կազմակերպելու հարթակները:

Հեռավար ուսուցման կազմակերպման ձեռնարկ, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն ՊՈԱԿ, 2020,

https://drive.google.com/file/d/1Fqjd4Pj2kejJ9iksB4GOB0rBfBdvU54K/view?fbclid=IwAR3E0bfzQRxto6ieZBpzfmtwPYfl2xn3MHxpIw1SRNFiaW3CXzYg2N1ed4k

72.Հեռավար ուսուցման բաղադրիչ է՝

- Խմբային և անհատական աշխատանքներ կազմակերպման հարթակներ և գործիքներ:

Հեռավար ուսուցման կազմակերպման ձեռնարկ, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն ՊՈԱԿ, 2020, https://drive.google.com/file/d/1Fqjd4Pj2kejJ9iksB4GOB0rBfBdvU54K/view?fbclid=IwAR3E0bfzQRxto6ieZBpzfmtwPYfl2xn3MHxpIw1SRNFiaW3CXzYg2N1ed4k

73.Հեռավար ուսուցման բաղադրիչ է՝

- Տեսադասեր ստեղծելու գործիքներ:

Հեռավար ուսուցման կազմակերպման ձեռնարկ, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն ՊՈԱԿ, 2020, https://drive.google.com/file/d/1Fqjd4Pj2kejJ9iksB4GOB0rBfBdvU54K/view?fbclid=IwAR3E0bfzQRxto6ieZBpzfmtwPYfl2xn3MHxpIw1SRNFiaW3CXzYg2N1ed4k

74.Հեռավար ուսուցման բաղադրիչ է՝

- Գնահատման գործիքներ, հարցաշարեր, առաջադրանքներ ստեղծելու և տեղայնացնելու գործիքներ:

Հեռավար ուսուցման կազմակերպման ձեռնարկ, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն ՊՈԱԿ, 2020, https://drive.google.com/file/d/1Fqjd4Pj2kejJ9iksB4GOB0rBfBdvU54K/view?fbclid=IwAR3E0bfzQRxto6ieZBpzfmtwPYfl2xn3MHxpIw1SRNFiaW3CXzYg2N1ed4k

75.Հեռավար կրթությունը՝

- չի ենթադրում միայն համաժամանակյա դասեր տեսազանգի միջոցով:

Հեռավար ուսուցման կազմակերպման ձեռնարկ, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն ՊՈԱԿ, 2020, https://drive.google.com/file/d/1Fqjd4Pj2kejJ9iksB4GOB0rBfBdvU54K/view?fbclid=IwAR3E0bfzQRxto6ieZBpzfmtwPYfl2xn3MHxpIw1SRNFiaW3CXzYg2N1ed4k

76.Հեռավար կրթության ժամանակ ուսուցիչը կարող է՝

- սովորողներին տրամադրել նյութեր և վարժություններ ինչպես մշակված իր կողմից, այնպես էլ պատրաստված այլ մասնագետների կողմից՝ էլեկտրոնային նյութերի բազայից:

Հեռավար ուսուցման կազմակերպման ձեռնարկ, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն ՊՈԱԿ, 2020, https://drive.google.com/file/d/1Fqjd4Pj2kejJ9iksB4GOB0rBfBdvU54K/view?fbclid=IwAR3E0bfzQRxto6ieZBpzfmtwPYfI2xn3MHxpIw1SRNFiaW3CXzYg2N1ed4k

77.Հեռավար կրթության ժամանակ ուսուցիչը կարող է՝

- սովորողներին տրամադրել ինչպես իր կողմից պատրաստված տեսադասեր, այնպես էլ այլ ուսուցիչների և կառույցների կողմից հասանելի տեսադասեր:

Հեռավար ուսուցման կազմակերպման ձեռնարկ, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն ՊՈԱԿ, 2020, https://drive.google.com/file/d/1Fqjd4Pj2kejJ9iksB4GOB0rBfBdvU54K/view?fbclid=IwAR3E0bfzQRxto6ieZBpzfmtwPYfI2xn3MHxpIw1SRNFiaW3CXzYg2N1ed4k

78.Հեռավար կրթության ժամանակ ուսուցիչը կարող է՝

- սովորողների հետ ժամանակ առ ժամանակ իրականացնել համաժամանակյա դասեր՝ ամփոփելու ուղարկված նյութը, տեսադասի թեման, պատասխանելու հարցերին, գործնական աշխատանքներ կատարելու:

Հեռավար ուսուցման կազմակերպման ձեռնարկ, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն ՊՈԱԿ, 2020, https://drive.google.com/file/d/1Fqjd4Pj2kejJ9iksB4GOB0rBfBdvU54K/view?fbclid=IwAR3E0bfzQRxto6ieZBpzfmtwPYfI2xn3MHxpIw1SRNFiaW3CXzYg2N1ed4k

79.Հեռավար կրթության ժամանակ՝

- չի խրախուսվում որպես ուսումնական նյութ տեղադրել ծավալուն գրավոր նյութեր և պարզապես հրահանգել ինքնուրույն կարդալ ու սովորել դրանք:

Հեռավար ուսուցման կազմակերպման ձեռնարկ, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն ՊՈԱԿ, 2020, https://drive.google.com/file/d/1Fqjd4Pj2kejJ9iksB4GOB0rBfBdvU54K/view?fbclid=IwAR3E0bfzQRxto6ieZBpzfmtwPYfl2xn3MHxpIw1SRNFiaW3CXzYg2N1ed4k

80.Կիբեռանվտանգության և առցանց անձնական տվյալների պաշտպանության կանոններից է՝

- համակարգիչների, հեռախոսների և պլանշետների ծրագրային ապահովումը պարբերաբար թարմացնելը, ավտոմատ թարմացման հնարավորությունը ակտիվացնելը:

Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար, Անահիտ Պարզյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան, https://lib.armedu.am/resource/27157

81.Կիբեռանվտանգության և առցանց անձնական տվյալների պաշտպանության կանոններից է՝

- հանրային վայրերում համացանցին միանալիս ցուցաբերել զգուշություն հավելվածին միանալիս տրվող հարցերին, մերժել հավելվածի մուտքի թույլտվությունը նամակներին, նկարներին և այլն:

Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար, Անահիտ Պարզյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան, https://lib.armedu.am/resource/27157

82.Կիբեռանվտանգության և առցանց անձնական տվյալների պաշտպանության կանոններից է՝

- ակտիվացնել հակավիրուսային ծրագրերը:

Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար, Անահիտ Պարզյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան, https://lib.armedu.am/resource/27157

83.Կիբեռանվտանգության և առցանց անձնական տվյալների պաշտպանության կանոններից է՝

- ներառել մեծատառեր, թվանշաններ և այլ նշաններ՝ գաղտնաբառեր կազմելիս:

Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար, Անահիտ Պարզյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան, https://lib.armedu.am/resource/27157

84.Կիբեռանվտանգության և առցանց անձնական տվյալների պաշտպանության կանոններից է՝

- էլեկտրոնային գործիքից օգտվելուց հետո դուրս գալ տվյալ հավելվածից, կողպել գործիքը գաղտնաբառով:

Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար, Անահիտ Պարզյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան, https://lib.armedu.am/resource/27157

85.Կիբեռանվտանգության և առցանց անձնական տվյալների պաշտպանության կանոններից է՝

- ստուգել կայքերի հավաստիությունը:

Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար, Անահիտ Պարզյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան, https://lib.armedu.am/resource/27157

86.Կիբեռանվտանգության և առցանց անձնական տվյալների պաշտպանության կանոններից է՝

- քննադատաբար մոտենալ համացանցում հայտնված տեղեկատվությանը:

Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար, Անահիտ Պարզյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան, https://lib.armedu.am/resource/27157

87.Կիբեռանվտանգության և առցանց անձնական տվյալների պաշտպանության կանոններից է՝

- խուսափել անչափահասների մասին տեղեկատվություն, տվյալներ ներբեռնելուց և մուտքագրելուց, հատկապես վերջիններիս անձնական տվյալները բացահայտող տեղեկություններ:

Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար, Անահիտ Պարզյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան, https://lib.armedu.am/resource/27157

88.Ուսուցիչը պետք է սովորողներին ուղղորդի կիբեռհետապնդման դեպքում՝

- կիսվել ծնողների կամ ուսուցիչների հետ:

Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար, Անահիտ Պարզյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան, https://lib.armedu.am/resource/27157

89.Ուսուցիչը պետք է սովորողներին ուղղորդի կիբեռհետապնդման դեպքում՝

- պահպանել սպառնալիքները՝ դրանք հետագայում որպես իրեղեն ապացույց ներկայացնելու համար:

Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար, Անահիտ Պարզյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան, https://lib.armedu.am/resource/27157

90.Ուսուցիչը պետք է սովորողներին ուղղորդի կիբեռհետապնդման դեպքում՝

- ապաակտիվացնել և փակել տվյալ սպառնացող աղբյուրի հետ հաղորդակցման աղբյուրը:

Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար, Անահիտ Պարզյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան, https://lib.armedu.am/resource/27157

91.Ուսուցիչը պետք է սովորողներին ուղղորդի կիբեռհետապնդման դեպքում՝

- անհրաժեշտության դեպքում դիմել ոստիկանություն:

Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար, Անահիտ Պարզյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան, https://lib.armedu.am/resource/27157

92.Ուսուցիչը պետք է համացանցը ճիշտ օգտագործելու համար՝

- սովորողներին ուղղորդի նախագծերի կամ սոցիալական աշխատանքների ստեղծման ուղղությամբ, որոնք ներբեռնելով համացանց՝ կհամախմբեն այլ մարդկանց՝ դրական նպատակների և գործողությունների իրականացման համար:

Կիբեռանվտանգության կանոններ ծնողների և ուսուցիչների համար, Անահիտ Պարզյան, Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան, https://lib.armedu.am/resource/27157

93.Սոցիալական ցանցերի օգտագործումը՝

- ազդում է դեռահասների վարքի վրա: Սոցիալական ցանցերից օգտվող դեռահասները ավելի հաճախ են առողջության համար վտանգ պարունակող պահվածք դրսևորում, ինչպես օրինակ ծխելը, խմելը և այլն:

ՀՀ Կրթության և գիտության նախարարի՝ 2018 թվականի դեկտեմբերի 17-ի N 1677-Ա/2 հրաման, «Երեխաների առցանց անվտանգության ապահովումը. ուղեցույց ծնողների համար»

94.Սոցիալական ցանցերի օգտագործումը՝

- ազդում է դեռահասների վարքի վրա: Սոցիալական ցանցերից օգտվողների մոտ ավելի արտահայտիչ են տրամադրության անկումները, սթրեսները, դեպրեսիաները, քնի խանգարումները, ցածր առաջադիմությունը:

ՀՀ Կրթության և գիտության նախարարի՝ 2018 թվականի դեկտեմբերի 17-ի N 1677-Ա/2 հրաման, «Երեխաների առցանց անվտանգության ապահովումը. ուղեցույց ծնողների համար»

95.Ուսումնադաստիարակչական գործընթացի գործառույթ է՝

- կրթական գործառույթը՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների բանկի ձևավորումը, որը հիմք է դառնում դաստիարակության գործընթացի կազմակերպման համար:

Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018

96.Ուսումնադաստիարակչական գործընթացի գործառույթ է՝

- Սովորողների ստեղծագործական ընդունակությունների ձևավորման և զարգացման գործառույթը:

Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018

97.Ուսումնադաստիարակչական գործընթացի գործառույթ է՝

- իմացական գործառույթը՝ սովորողների ուսումնաիմացական գործունեության իրականացումը՝ ներառյալ՝ ինքնակրթությունը:

Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018

98.Ուսումնադաստիարակչական գործընթացի գործառույթ է՝

- դաստիարակչական գործառույթը՝ սովորողների հայացքների, համոզմունքների, գիտելիքների հիման վրա գիտական աշխարհայացքի և արժեքային համակարգի ընդհանուր մշակույթի ձևավորումը:

Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018

99.Ուսումնադաստիարակչական գործընթացի գործառույթ է՝

- հոգեկան զարգացման գործառույթը:

Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018

100.Դասարանի ղեկավարը՝

- իրականացնում է ընդհանուր մանկավարժական կառավարում՝ սերտորեն համագործակցելով ուսուցիչների, աշակերտների և ծնողների հետ:

Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018

101.Դասարանի ղեկավարը՝

- զարգացնում է սովորողների ակտիվությունը, ինքնուրույնությունը և պատասխանատու վերաբերմունքը ուսուցման նկատմամբ՝ հաշվի առնելով նրանց անհատական առանձնահատկությունները:

Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018

102.Դասարանի ղեկավարը՝

- պետք է ունենա պետական և ազգային մտածողություն, կայուն համոզմունքներ, ռեֆլեքսիա, կազմակերպչական ընդունակություններ:

Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018

103.Դասարանի ղեկավարի՝ ծնողների հետ տարվող աշխատանքի բաղադրիչ է՝

- աշակերտի ընտանիքի, նրա կենսաձևի և սոցիալական մշակույթի ուսումնասիրություն:

Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018

104.Դասարանի ղեկավարի՝ ծնողների հետ տարվող աշխատանքի բաղադրիչ է՝

- երեխաների դաստիարակության մեջ դպրոցի ու ընտանիքի միասնական պահանջների սահմանումն ու պահպանումը:

Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018

105.Դասարանի ղեկավարի՝ ծնողների հետ տարվող աշխատանքի բաղադրիչ է՝

- ծնողների հետ տարվող մանկավարժական-լուսավորչական աշխատանքը ծնողական համալսարանների և պրակտիկ մանկավարժական օգնության, նրանց մանկավարժական գիտելիքների հարստացման միջոցով:

Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018

106.Դասարանի ղեկավարի՝ ծնողների հետ տարվող աշխատանքի բաղադրիչ է՝

- երեխայի զարգացման ընթացքի վերաբերյալ փոխադարձ տեղեկություն տալը:

Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018

107.Դասարանի ղեկավարի՝ ծնողների հետ տարվող աշխատանքի բաղադրիչ է՝

- երեխաների ուսուցման և դաստիարակության գործընթացների արդյունավետությանը նպաստող համատեղ որոշումների ընդունումը:

Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018

108.Դասարանի ղեկավարի՝ ծնողների հետ տարվող աշխատանքի բաղադրիչ է՝

- աշակերտների ազատ ժամանակի արդյունավետ օգտագործման աշխատանքների մեջ ծնողների ներգրավումը:

Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018

109.Դասարանի ղեկավարի՝ ծնողների հետ տարվող աշխատանքի բաղադրիչ է՝

- ծնողների հետ վստահելի և գործնական հարաբերությունների սահմանումը:

Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018

110. Ծնողներին դպրոց հրավիրելը և նրանց տուն այցելելը՝

- իրագործվում են նախնական պայմանավորվածությամբ:

Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018

111. Դասղեկի աշխատանքային պլանը՝

- ապագային նպատակամղված գրոծունեություն է, որը նախանշում է աշակերտների զարգացման հիմնական ուղիները:

Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018

112. Նախագծային ուսուցումը՝

- ուսումնաճանաչողական և համատեղ աշխատանքի կազմակերպման ձև է, որում ներգրավված են դասավանդողներն ու ուսումնառուները:

Նախագծային ուսուցում. Ալեքսանդր Շագաֆյան (Կրթություն ամենուր և բոլորին) Բուն գիտամասնագիտական TV, http://boon.am/learning/

113. Նախագծային ուսուցումը՝

- կարող է հարմարեցվել տարբեր միջավայրերի և նպատակների: Այն առավել արդյունավետ է, երբ դուրս է գալիս «դասարանային» և դպրոցական մակարդակից և գնում է դեպի համայնք:

Նախագծային ուսուցում. Ալեքսանդր Շագաֆյան (Կրթություն ամենուր և բոլորին) Բուն գիտամասնագիտական TV, http://boon.am/learning/

114. Նախագծային ուսուցումը՝

- համապատասխանում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության չորս գերակայությունների տրամաբանությանը՝ սովորել իմանալու համար, սովորել կիրառելու համար, սովորել լինելու համար, սովորել միասին ապրելու համար:

Նախագծային ուսուցում. Ալեքսանդր Շագաֆյան (Կրթություն ամենուր և բոլորին) Բուն գիտամասնագիտական TV, http://boon.am/learning/

115.Ուսումնառության արդյունքների գնահատումը՝

- նպատակ ունի որոշելու սովորողի մոտ կարողունակության զարգացման աստիճանը ըստ ուսումնական առարկաների չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների և հմտությունների մակարդակի, ինչպես նաև դիրքորոշումների ու արժեքների ձևավորման:

ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»

116.Ուսումնառության արդյունքների գնահատումը՝

- իրականացվում է քանակական (միավորային) և ձևավորող (ուսուցանող) ձևերով՝ դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից հաստատված կարգով:

ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»

117.Բնութագրման միջոցով (ձևավորող) գնահատման ընթացքում սովորողի հոգեբանական զարգացման բնութագրի բաղադրիչ է՝

- Դպրոցի նկատմամբ վերաբերմունքը:

ՀՀ ԿԳ նախարարի՝ 04.10.2007 թվականի թիվ 846-Ն հրաման Հանրակրթական դպրոցի առաջին դասարանում սովորողների տարեկան ամփոփիչ գնահատման կարգը հաստատելու մասին

118.Բնութագրման միջոցով (ձևավորող) գնահատման ընթացքում սովորողի հոգեբանական զարգացման բնութագրի բաղադրիչ է՝

- Կամային վարքը և ուշադրությունը:

ՀՀ ԿԳ նախարարի՝ 04.10.2007 թվականի թիվ 846-Ն հրաման Հանրակրթական դպրոցի առաջին դասարանում սովորողների տարեկան ամփոփիչ գնահատման կարգը հաստատելու մասին

119.Բնութագրման միջոցով (ձևավորող) գնահատման ընթացքում սովորողի հոգեբանական զարգացման բնութագրի բաղադրիչ է՝

- Սոցիալական զարգացումը, այդ թվում՝ փոխհարաբերությունները ուսուցիչների, դասընկերների հետ:

ՀՀ ԿԳ նախարարի՝ 04.10.2007 թվականի թիվ 846-Ն հրաման Հանրակրթական դպրոցի առաջին դասարանում սովորողների տարեկան ամփոփիչ գնահատման կարգը հաստատելու մասին

120.Բնութագրման միջոցով (ձևավորող) գնահատման ընթացքում սովորողի հոգեբանական զարգացման բնութագրի բաղադրիչ է՝

- անձնային զարգացումը, այդ թվում՝ինքնագիտակցության և հուզական զարգացումը, սոցիալական վարքը:

ՀՀ ԿԳ նախարարի՝ 04.10.2007 թվականի թիվ 846-Ն հրաման Հանրակրթական դպրոցի առաջին դասարանում սովորողների տարեկան ամփոփիչ գնահատման կարգը հաստատելու մասին

121.Բնութագրման միջոցով (ձևավորող) գնահատման ընթացքում սովորողի հոգեբանական զարգացման բնութագրի բաղադրիչ է՝

- իմացական ոլորտը:

ՀՀ ԿԳ նախարարի՝ 04.10.2007 թվականի թիվ 846-Ն հրաման Հանրակրթական դպրոցի առաջին դասարանում սովորողների տարեկան ամփոփիչ գնահատման կարգը հաստատելու մասին

122.Մոդուլը՝

- մեկ կամ մի քանի հանրակրթական առարկաների ինտեգրված կամ համատեղ իրականացվող ծրագիր է, որը ներկայացնում է հանրակրթական առարկաներից յուրաքանչյուրի պետական ծրագրի մի մասը կամ ծրագիրն ամբողջությամբ՝ դրան ուսումնական պլանով հատկացված ժամաքանակով:

ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»

123. Մանկավարժական կոլեկտիվում նորամուծությունների իրացմանը պատրաստ առաջին խումբը՝

- նորարարներն են, որ մշտապես ձգտում են նորի իրագործմանը:

Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018

124. Մանկավարժական կոլեկտիվում նորամուծությունների իրացմանը պատրաստ երկրորդ խումբը՝

- նորամուծությունների վաղ իրականացնողներն են, որ անմիջապես գնում են նորարարների հետևից, բայց նրանցից տարբերվում են ցածր ռիսկի աստիճանով և հանդես են գալիս որպես խորհրդականներ:

Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018

125. Մանկավարժական կոլեկտիվում նորամուծությունների իրացմանը պատրաստ երրորդ խումբը՝

- յուրացնում են նորամուծությունները անմիջապես վաղ իրականացնողների հետ, բայց հազվադեպ են հանդես գալիս առաջնորդի դերում:

Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018

126. Մանկավարժական կոլեկտիվում նորամուծությունների իրացմանը պատրաստ չորրորդ խումբը՝

- նորամուծություններն ուշ իրականացնող մեծամասնությունն է, որին հատուկ է սկեպտիցիզմը, նորամուծությունները յուրացնում են որպես միջին սուբյեկտ՝ իրենց պահանջմունքների գնահատման արդյունքում:

Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018

127. Մանկավարժական կոլեկտիվում նորամուծությունների իրացմանը պատրաստ հինգերորդ խումբը՝

- կազմում են տատանվողները, որոնք ամենավերջինն են յուրացնում նորամուծությունը, նրանց հատուկ է բավական կայուն վերաբերմունքը:

Դպրոցի կառավարման հիմունքները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Լաուրա Ասատրյան, Մարգարիտ Ասատրյան, Նաիրա Սաֆարյան, Երևան, Արտագերս, 2018

128. Տարվա լավագույնները մրցույթում ներկայացվող ուսուցչական ծրագիրը կարող է ուղղված լինել՝

- դասավանդման այլընտրանքային, նոր մեթոդների ներդրմանն ու կիրառմանը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 07.10.2020 թվականի թիվ 37-Ն հրամանը «Տարվա լավագույնները» մրցույթի անվանակարգերի, դրանց պահանջների և անցկացման կարգը հաստատելու մասին:

129. Տարվա լավագույնները մրցույթում ներկայացվող ուսուցչական ծրագիրը կարող է ուղղված լինել՝

- գնահատման այլընտրանքային ձևերի ներդրմանն ու կիրառմանը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 07.10.2020 թվականի թիվ 37-Ն հրամանը «Տարվա լավագույնները» մրցույթի անվանակարգերի, դրանց պահանջների և անցկացման կարգը հաստատելու մասին:

130. Տարվա լավագույնները մրցույթում ներկայացվող ուսուցչական ծրագիրը կարող է ուղղված լինել՝

- առարկայական հեղինակային ծրագրերի մշակմանն ու կիրառությանը դպրոցական բաղադրիչի շրջանակներում:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 07.10.2020 թվականի թիվ 37-Ն հրամանը «Տարվա լավագույնները» մրցույթի անվանակարգերի, դրանց պահանջների և անցկացման կարգը հաստատելու մասին:

131. Դպրոցական բռնությունը՝

- բռնության տարատեսակ է, որի դեպքում ուսուցիչների (կամ աշակերտների) կողմից ուժ է կիրառվում աշակերտների նկատմամբ կամ, ինչը պատահում է չափազանց հազվադեպ, աշակերտների կողմից ուժ է կիրառվում ուսուցչի նկատմամբ:

Մարինե Միքայելյան, Բռնության և զոհի հոգեբանություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Ճարտարագետ, 2016

132. Դպրոցական բռնությունը՝

- կարող է լինել հուզական եւ ֆիզիկական բնույթի:

Մարինե Միքայելյան, Բռնության և զոհի հոգեբանություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Ճարտարագետ, 2016

133.Հուզական բռնության ձեւ է՝

- Ծաղրը, մականուններ կպցնելը, անվերջ նկատողությունները, ոչ օբյեկտիվ գնահատականները, ստորացումն այլ երեխաների ներկայությամբ եւ այլն:

Մարինե Միքայելյան, Բռնության և զոհի հոգեբանություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Ճարտարագետ, 2016

134.Հուզական բռնության ձեւ է՝

- Մեկուսացումը, հրաժարումը զոհի հետ հաղորդակցվելուց (երեխայի հետ չեն խաղում, նրա հետ նույն նստարանին չեն ցանկանում նստել, ծննդյան տարեդարձերին չեն հրավիրում):

Մարինե Միքայելյան, Բռնության և զոհի հոգեբանություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Ճարտարագետ, 2016

135.Ֆիզիկական բռնություն է համարվում՝

- ծեծը, հարված հասցնելը, ապտակը, իրերը վերցնելը կամ փչացնելը եւ այլն:

Մարինե Միքայելյան, Բռնության և զոհի հոգեբանություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Ճարտարագետ, 2016

136. Դպրոցական բռնության զոհ կարող է դառնալ՝

- ցանկացած երեխա, սակայն սովորաբար ընտրվում են այնպիսիները, ովքեր թույլ են կամ ինչ-որ բանով տարբերվում են ուրիշներից:

Մարինե Միքայելյան, Բռնության և զոհի հոգեբանություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Ճարտարագետ, 2016

137. Դպրոցում հոգեբանական անվտանգ միջավայրը

- փոխազդեցության այն միջավայրն է, որն ազատ է հոգեբանական բռնության դրսեւորումներից եւ ռեֆերենտային նշանակություն ունի աշակերտների համար:

Մարինե Միքայելյան, Բռնության և զոհի հոգեբանություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Ճարտարագետ, 2016

138.Դպրոցական բռնության հետեւանք է՝

- խանգարվում են ընկերային հարաբերությունները:

Մարինե Միքայելյան, Բռնության և զոհի հոգեբանություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Ճարտարագետ, 2016

139.Դպրոցական բռնության հետեւանք է՝

- զոհը խմբում ցածր կարգավիճակ է ունենում, ինչը ուսման մեջ եւ վարքագծում պրոբլեմների պատճառ է հանդիսանում:

Մարինե Միքայելյան, Բռնության և զոհի հոգեբանություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Ճարտարագետ, 2016

140.Դպրոցական բռնության հետևանք է՝

- դեռահասների մոտ դպրոցական բռնությունն առաջացնում է նույնականության խանգարումներ:

Մարինե Միքայելյան, Բռնության և զոհի հոգեբանություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Ճարտարագետ, 2016

141. Պետական ուսումնական հաստատության ուսուցչի մեկ դրույքի լրիվ ուսումնական ծանրաբեռնվածությունը (դասավանդման ծավալը) չի կարող գերազանցել ...

- Շաբաթական քսաներկու դասաժամը:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք,հոդված 25.3

142. Ինչպե՞ս է սահմանվում «Ուսուցչի ատեստավորում» հասկացությունը:

- Ուսուցչի գիտելիքների, աշխատանքային կարողությունների, հմտությունների՝ զբաղեցրած պաշտոնին համապատասխանության որոշման գործընթաց:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք,հոդված 3.14.1

143. Ինչպե՞ս է սահմանվում «Ուսուցչի որակավորման տարակարգ» հասկացությունը:

- Ուսուցչի մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ու կարողություններին համապատասխանող որակավորման չափանիշ:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք,հոդված 3.14.2

144. Հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթության գործընթացը կարգավորվում է...

- Օրինակելի ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 14.2

145. Օրինակելի ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը մշակում և հաստատում է...

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 14.2

146. Ինչպե՞ս է սահմանվում «ուսուցիչ» հասկացությունը:

- Ուսումնական հաստատությունում սովորողների կողմից առարկայական ծրագրերի յուրացումը դասապրոցեսի միջոցով ապահովող և այդ գործընթացի համար անմիջականորեն պատասխանատու մանկավարժական աշխատող:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք,հոդված 3.կետ 13

147. Ովքե՞ր են կրթական գործընթացի մասնակիցները ուսումնական հաստատությունում

- Սովորողը, սովորողի ծնողը, ուսուցիչը և մանկավարժական այլ աշխատողներ, վարչական աշխատողները, խորհրդում և խորհրդակցական մարմիններում ընդգրկված՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները և այլ անձինք:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք,հոդված 19.1

148. Ո՞վ կարող է լինել ուսումնական հաստատության ուսուցիչ:

- Ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որը ստացել է մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով) կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք,հոդված 26.1

149. Ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակ ճանաչված ուսուցիչը աշխատանքի ներկայանալուց հետո ի՞նչ ժամկետում է ենթակա ատեստավորման :

- Չորսամսյա ժամկետում

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք,հոդված 26.26

150. Կրթության կազմակերպման գործընթացում ուսուցչին աջակցող մանկավարժական աշխատող.

- ուսուցչի օգնական

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք,հոդված 3

151.Ե՞րբ և ի՞նչ ժամկետով է կազմավորվում մանկավարժական խորհուրդը:

- Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական կոլեկտիվի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով:

«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն»
ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 76

152. Ե՞րբ են գումարվում մեթոդական միավորումների նիստերը և արձանագրվում են դրանք թե ոչ:

- Մեթոդական միավորումների նիստերը գումարվում են ամիսը առնվազն մեկ անգամ: Սահմանված կարգով նիստերն արձանագրվում են:

«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն»
ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 95

153. Ո՞վ է ղեկավարում մանկավարժական խորհրդի աշխատանքը:

- Մանկավարժական խորհրդի աշխատանքը ղեկավարում է հանրակրթական դպրոցի տնօրենը (տնօրենի պաշտոնակատարը), որն ի պաշտոնե մանկավարժական խորհրդի նախագահն է:

«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի
կանոնադրություն, կետ 81

154. Ի՞նչ աշխատանք է իրականացնում դասղեկը դպրոցում:

- Իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, հանրակրթական դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն:

«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն»
ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 74, ենթ. 7

155. Մանկավարժական խորհուրդը որոշում է ընդունում.

- օրենքով սահմանված կարգով սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կամ խրախուսում կիրառելու մասին:

«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն»
ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 80.10

156. Մանկավարժական խորհուրդը ի՞նչպես է ընտրում դպրոցի կառավարման խորհրդի անդամության թեկնածու:

- Մանկավարժական խորհուրդը, նախարարության սահմանած կարգով, իր կազմից, գաղտնի քվեարկությամբ ընտրում է խորհրդի անդամության թեկնածուներ:

«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն»
ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 78

157. Մանկավարժական խորհրդի որոշմամբ հանրակրթական դպրոցի 4-րդ դասարանի սովորողը կարո՞ղ է ենթարկվել կարգապահական տույժի:

- Տարրական դպրոցի սովորողի նկատմամբ կարգապահական տույժ չի կիրառվում: Ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով կարգապահական տույժեր՝ նկատողություն և խիստ նկատողություն կարող են կիրառվել միայն միջին և ավագ դպրոցների սովորողների նկատմամբ:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 21, մաս 2,

158. Մանկավարժական աշխատողի պաշտոն զբաղեցնելու իրավունք չունի այն անձը, որը՝

- տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության կատարմանը: Այդ հիվանդությունների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 24, մաս 3

159. Ուսումնական հաստատության աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունները սահմանում է՝

- Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 25, մաս 1

160. Պետական ուսումնական հաստատության ուսուցչի մեկ դրույքի լրիվ ուսումնական ծանրաբեռնվածությունը (դասավանդման ծավալը) չի կարող գերազանցել՝

- շաբաթական քսաներկու դասաժամը:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 25, մաս 3

161. Հանրակրթական ծրագրերի հենքային ուսումնական պլանում ուսումնական բնագավառներն են՝

- Հայոց լեզու և գրականություն.
- Հայրենագիտություն.
- Օտար լեզուներ.
- ԲՏՃՄ.
- Արվեստ և արհեստ.
- Հասարակություն, հասարակական գիտություններ.
- Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն:

<<Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգ>>
2021 թվ 136-Ն ՀՀ կառավարության որոշում, մաս 20

161. Հանրակրթական տարրական ծրագրի շրջանավարտը պետք է կարողանա՝

- օգտագործի ունեցած գիտելիքները և հմտությունները օբյեկտները չափելու, հաշվելու, համեմատելու, նկարագրելու, դրանց քանակական, որակական և տարածական պարզ հարաբերակցությունները գնահատելու համար :

<<Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգ>>
2021 թվ 136-Ն ՀՀ կառավարության որոշում, մաս 9, 3

162. Հանրակրթական ուսումնական հաստատության հատուկ մանկավարժը պետք է ունենա՝

- բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան մանկավարժական որակավորմամբ:

ՀՀ կառավարության որոշում 1391-Ն 2010թ. 8-րդ գլուխ, մաս 3

163. Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանը պետք է ունենա՝

- բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ:

ՀՀ կառավարության որոշում 1391-Ն 2010թ. 9-րդ գլուխ, մաս 3

164. Հանրակրթական ուսումնական հաստատության սոցիալական մանկավարժի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա՝

- բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն (սոցիալական մանկավարժություն, սոցիալական աշխատանք՝ մասնագիտություններ որակավորմամբ):

ՀՀ կառավարության որոշում 1391-Ն 2010թ. 10-րդ գլուխ, մաս 3

165. Ի՞նչ եղանակներով է իրականացվում ուսումնական գործընթացը ուսումնական հաստատություններում:

- Ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացն իրականացվում է խմբային կամ անհատական ուսուցման եղանակով:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք,հոդված 17.3

166. Ո՞րն է ուսումնական հաստատությունում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձևը:

- Ուսումնական հաստատությունում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք,հոդված 17.3

167. Ո՞ր նորմատիվ փաստաթղթով է սահմանվում դասի տևողությունը:

- Դասի տևողությունը սահմանվում է հանրակրթության պետական չափորոշիչով:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք,հոդված 17.3

168. Թվարկել սովորողի իրավունքներից առնվազն 4-ը:

- ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն.
- ծնողի համաձայնությամբ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև տվյալ ուսումնական հաստատությունում առկա հոսքը, ստանալու կրթական վճարովի ծառայություններ.
- անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնանյութական բազայից.
- մասնակցելու ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների.
- պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը.
- ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը.
- ազատորեն փնտրելու և մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.
- ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները.

- օգտվելու օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք,հոդված 20.2

169. Թվարկել սովորողների պարտականություններից առնվազն 2-ը:

- կատարել ուսումնական հաստատության կանոնադրության և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները.
- ստանալ հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ, ձեռք բերել և տիրապետել համապատասխան հմտությունների և կարողությունների, բավարարել սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները.
- հաճախել և մասնակցել ուսումնական պարապմունքներին.
- կատարել օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք,հոդված 20.3

170. Ի՞նչպես է համալրվում ուսուցչի թափուր տեղը:

- Պետական ուսումնական հաստատությունում ուսուցչի թափուր տեղ առաջանալու դեպքում այն համալրվում է մրցութային հիմունքներով՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած մրցույթի օրինակելի կարգի և ուսումնական հաստատության կանոնադրության, բացառությամբ նպատակային ուղեգրով մասնագիտական կրթություն ստացած թեկնածուի առկայության դեպքերի:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք,հոդված 24.3

171. Ինչպե՞ս կարող է սահմանվել սովորողի խրախուսումը:

- Սովորողների համար ուսումնական հաստատության, նրա հիմնադրի, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի, տարածքային կառավարման և

տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական գործընկերների, կազմակերպությունների, անհատների կողմից կարող են սահմանվել բարոյական և նյութական խրախուսման ձևեր՝ շնորհակալագիր, գովասանագիր, դրամական խրախուսում կամ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ ձևեր:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք,հոդված 23.1

172. Թափուր տեղ առաջանալու դեպքում դասաժամերը տրամադրվում են՝

- հաստատությունում աշխատող, համապատասխան որակավորում ունեցող, նույն հաստատությունում տվյալ առարկան դասավանդած կամ դասավանդող՝ մինչև 22 դասաժամ ծանրաբեռնվածություն ունեցող ուսուցչին:

«Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կարգ» մաս 3

173. Մրցույթը հայտարարվում է թափուր տեղ առաջանալու օրվանից՝

- ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ հուլիսի 1-ից օգոստոսի 20-ն ընկած ժամանակահատվածում թափուր տեղ առաջանալու դեպքում մրցույթը հայտարարվում է օգոստոսի 20-ից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

«Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կարգ» մաս 5

174. Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթը անցկացվում է՝

- երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի

«Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կարգ» մաս 36

175. Ի՞նչ հարաբերակցությամբ են բաշխվում թեստավորման հարցաշարի բովանդակային բաղադրիչները.

- կրթության բնագավառի օրենսդրություն - 30%.
- մանկավարժական, հոգեբանական, ուսումնամեթոդական գիտելիքների տիրապետում - 70%

«Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար
անցկացվող մրցույթի կարգ» մաս 41

176. Մասնակիցը մրցույթի հաջորդ՝ հարցազրույցի փուլ է անցնում՝

- թեստավորման առաջադրանքների առնվազն 90 տոկոսին ճիշտ պատասխանելու դեպքում:

*«Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար
անցկացվող մրցույթի կարգ» մաս 51*

177. Ո՞վ և ե՞րբ է նշանակում ուսումնական առարկաներից տարեկան գնահատականներ.

- Տարեկան գնահատականներ նշանակում են դասավանդող ուսուցիչները՝ ուսումնական պարապմունքների վերջին շաբաթվա ընթացքում՝ հաշվի առնելով սովորողի կիսամյակային գնահատականները:

*ՀՀ ԿԳՆ 2012թ. 388-Ն հրամանով հաստատված
հավելվածի 10-րդ կետ*

178. Հանրակրթական դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ինչպիսի խորհրդակցական մարմիններ են ձևավորվում:

- մանկավարժական խորհուրդ
- առարկայական մեթոդական միավորումներ
- ծնողական խորհուրդ
- աշակերտական խորհուրդ
- հոգաբարձուների խորհուրդ

«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն»

ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 75

179. Հաստատությունում մրցույթ չի հայտարարվում, և թափուր տեղը զբաղեցվում է ոչ մրցութային կարգով, եթե՝

- տեղը թափուր է ժամանակավորապես (աշխատողի՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու կամ հղիության, ծննդաբերության և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում) :

«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն»

ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, մաս 10

180. Հաստատությունում մրցույթ չի հայտարարվում, և թափուր տեղը զբաղեցվում է ոչ մրցութային կարգով, եթե՝

- թափուր ժամերն առաջացել են 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում,

«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն»

ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, մաս 10

181. Հաստատությունում մրցույթ չի հայտարարվում, և թափուր տեղը զբաղեցվում է ոչ մրցութային կարգով, եթե՝

- առկա է նպատակային ուղեգրով մասնագիտական կրթություն ստացած թեկնածու:

«Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կարգ» մաս 10

182. Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի հանձնաժողովը կազմվում է՝

- 5 անդամից՝ տնօրեն (տնօրենի պաշտոնակատար կամ պարտականությունները կատարող), տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, համապատասխան մասնախմբի ղեկավար, մեկ ուսուցիչ՝ տվյալ հաստատությունից և մեկ ուսուցիչ՝ հանրակրթական այլ ուսումնական հաստատությունից՝ համաձայնությամբ: Եթե հաստատությունը չունի տնօրենի՝ ուսումնական գծով տեղակալ կամ համապատասխան մասնախմբի ղեկավար, ապա նրանց փոխարեն հանձնաժողովի կազմում ընդգրկվում են տվյալ հաստատությունից այլ ուսուցիչներ:

«Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կարգ» մաս 22

183. Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի հանձնաժողովի նիստն իրավազոր է,

- եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի առնվազն 4 անդամ:

«Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կարգ» մաս 25

184. Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի հանձնաժողովի նիստն իրավազոր չլինելու դեպքում՝

- նիստը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան 1 անգամ՝ մինչև 3 աշխատանքային օրով:

«Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կարգ» մաս 26

185. Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի թեստավորման արդյունքները կարող են բողոքարկվել հանձնաժողովին՝

- թեստավորման արդյունքների հրապարակումից հետո՝ մեկ ժամվա ընթացքում:

«Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կարգ» մաս 56

186. Դպրոցի կողմից հանրակրթություն իրականացնելիս՝ հանրակրթական հիմնական ծրագրերը, որպես անբաժանելի մաս, կարող են ներառել՝

- մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպումը՝ որպես առաջին՝ դպրոցական մակարդակ:

«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 17

187. Թվարկվածներից ո՞րն է համարվում ձեռնարկատիրական գործունեության տեսակ՝

- համակարգչային ծրագրերի և լեզուների լրացուցիչ ուսուցման կազմակերպում:

«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն»
ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 18

188. Ի՞նչպիսի որոշումներ է ընդունում դպրոցի մանկավարժական խորհուրդը.

- սովորողներին դասարանից-դասարան (այդ թվում՝ հանրակրթական դպրոցի կազմում՝ հիմնական կրթության 2-րդ մակարդակից 3-րդ մակարդակ փոխադրվելիս) փոխադրելու, ամառային առաջադրանքներ տալու և նույն դասարանում մնալու մասին.

«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն»
ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 80, ենթ. 3

189. Ո՞վ է սահմանում հավելյալ վարձատրություն սահմանամերձ, բարձր լեռնային և լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար.

- Հայաստանի Հանրապետության կառավարությունը

«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 50, մաս 3

190. Ինչպե՞ս է ձևավորվորվում Էլեկտրոնային դասամատյանը.

- Էլեկտրոնային դասամատյանը ձևավորվում է դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում դպրոցի դասարանների կազմավորման և դասաբաշխման, թեմատիկ պլանների և դասացուցակի հիման վրա՝ ինքնաշխատ եղանակով:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի
սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրամանի հավելված, կետ 2

191. Ո՞վ է լրացնում էլեկտրոնային դասամատյանը.

- Էլեկտրոնային դասամատյանի լրացումը (գործածումը) իրականացնում են առարկաները դասավանդող ուսուցիչները:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի
սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրամանի հավելված, կետ 2

192. Ի՞նչ ժամանակահատվածում է Էլեկտրոնային դասամատյանում ուսուցիչը լրացնում է դասացուցակով նախատեսված դասը՝

- երեք աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի
սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրամանի հավելված, կետ 6

193. Որքա՞ն է ավարտական դասարանների դասամատյանների պահպանման ժամկետը:

- 50 տարի

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի
սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրամանի հավելված, կետ 8

194. Ի՞նչ տեղեկատվություն է պարունակում ուսուցչի բաց թողած և փոխարինած դասաժամերի հաշվառման մատյանը.

- Ուսուցչի բացակայած օրերի թիվը, ուսուցչի բացակայած ժամանակահատվածի սկզբի և ավարտի տարին, ամիսն ու ամսաթիվը, բաց թողնված դասաժամերի

թիվը, դասերը փոխարինած ուսուցիչների անունը և ազգանունը, փոխարինած դասաժամերը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի
սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրամանի հավելված, մաս 10, կետ 2

195. Ի՞նչ տեղեկատվություն է պարունակում ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի նիստի արձանագրությունը:

- Արձանագրության հերթական համարը, նիստի անցկացման օրը, նիստին մասնակցողների թիվը, նիստի օրակարգը, քննարկված հարցերի ամփոփ բովանդակությունը, խորհրդի որոշումը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի
սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրամանի հավելված, մաս 9, կետ 2

196. Ի՞նչ տեղեկատվություն է պարունակում Ուսումնական առարկաների թեմատիկ պլանը:

- Առարկայի անվանումը, դասարանը, տարեկան ժամաքանակը ըստ ուսումնական պլանի, յուրաքանչյուր դասի թեման՝ նոր տողից, թեմայի ընթացքում ուսուցանվող նյութի վերնագիրը և էջը դասագրքում

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի
սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրամանի հավելված, մաս 11, կետ 2

197. Ո՞վ է համարվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ.

- ուսուցման հետ կապված դժվարություններ, այդ թվում՝ զարգացման ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններ ունեցող անձ, որի կողմից հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացվելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ.

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք,հոդված 3, 10.2

198. Ո՞վ է հաստատում ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը.

- Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք,հոդված 24, կետ 1

199. Ատեստավորման ենթակա չէ՝

- տվյալ պաշտոնը մեկ տարուց պակաս ժամկետով զբաղեցնող ուսուցիչը:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք,հոդված 26, կետ 24.1

200. Հղի և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող ուսուցիչը ենթակա է ատեստավորման՝

- արձակուրդից վերադառնալուց ոչ շուտ, քան մեկ տարի հետո, եթե նա ավելի վաղ ատեստավորվելու հայտ չի ներկայացրել:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք,հոդված 26, կետ 25